Ինչպես է պլաստմասսան ազդում երեխաների առողջության վրա

Պլաստմասսե իրերը՝ խաղալիքներ, շշեր, տարաներ, սպասք, տուփեր և այլն, երեխային շրջապատում են ամենուր:

Պլաստմասսան երեխաների առողջության վրա ազդում է հիմնականում դրա բաղադրությունում առկա քիմիական նյութերի միջոցով՝ ֆտալատներ, բիսֆենոլ Ա և պերֆտորալկիլային միացություններ (ՊՖԱՄ-ներ), որոնք անջատվում են ժամանակի ընթացքում, կամ բարձր և ցածր ջերմաստիճանների ազդեցությանը հետևանքով: Վտանգը հատկապես մեծ է վաղ մանկության շրջանում, երբ օրգանիզմը դեռ ձևավորման և զարգացման փուլում է:

Վերը նշված քիմիական նյութերը կարող են մնալ երեխայի օրգանիզմում երկար ժամանակ և խոչընդոտել դրա ճիշտ աճին ու զարգացմանը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միկրոպլաստմասսան կուտակվում է երեխաների ուղեղում և վերարտադրողական օրգաններում, ընդ որում՝ ուղեղում միկրոպլաստմասսայի քանակն ավելի մեծ է, քան երիկամներում և լյարդում:

Պլաստմասսե իրերի ազդեցությունը կարող է հանգեցնել գիրության, անպտղության, ասթմայի և ուղեղի զարգացման խանգարումների (ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ, աուտիզմ, վարքագծի փոփոխություն):

Հաշվի առնելով առողջությանը պատճառված վնասները, անհրաժեշտ է սահմանափակել պլաստմասսայից պատրաստված կենցաղային իրերի օգտագործումը:

Խորհուրդ է տրվում նախապատվությունը տալ այլընտրանքային տարբերակներին:

Հետևեք պարզ խորհուրդներին՝

- ջուրը պահեք ապակյա շշերում,
- կաթը և ըմպելիքները երեխային տվեք ճենապակյա կամ ապակյա բաժակով,
- սահմանափակեք խոհանոցային պլաստմասսե սպասքի օգտագործումը,
- մի՛ տաքացրեք պլաստմասսե տարայով սննդամթերքն միկրոալիքային վառարանում, սառցարանում մի՛ պահեք սննդամթերքը պլաստմասսե տարաներում (երկու դեպքում էլ պլաստմասսե տարայից անջատվում են միկրոպլաստմասսաներ, որոնք սննդի հետ ներթափանցում են օրգանիզմ),
- հնարավորության դեպքում, պլաստմասսե տարաները փոխարինեք ավելի անվտանգ՝ փայտյա, էմալապատ, ապակյա, չժանգոտվող մետաղյա, ճենապակյա պարագաներով:



Պաշտպանեք երեխաների առողջությունը և մի՛ աղտոտեք շրջակա միջավայրը:

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Մեկանգամյա օգտագործման պլաստմասսե արտադրանքների անվտանգ այլընտրանքները Հայաստանի փոքր ֆերմերային տնտեսություններում» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ
ՀՀ, Երևան, Շինարարների փող.18, բն. 52
Էլ. փոստ՝ info@ruraldaf.am
Վեբ կայք՝ http://www.ruraldaf.am

ԵՐԵՎԱՆ 2025